ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

-- դեկտեմբերի 2020 թվականի № --- Ա
ք. Երևան

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ՑԱՆՑԵՐ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԲԱԺՆԵՄԱՍԻ ՕՏԱՐՄԱՆԸ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով, որ՝

ա) «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերությունը (այսուհետ՝ Ընկերություն) 2020 թվականի սեպտեմբերի 17-ի №635-20 և հոկտեմբերի 13-ի №713-20/5695-2020 գրություններով դիմել է Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով (այսուհետ՝ Հանձնաժողով) և հայտնել, որ Ընկերության և «Տ-Քնսթրաքշն» փակ բաժնետիրական ընկերության միջև 2017 թվականի նոյեմբերի 11-ին կնքվել է անշարժ գույքի վարձակալության պայմանագիր, որով վերջինիս են հանձնվել Երևան քաղաքի Բագրատունյաց 54/1 հասցեում գտնվող 4,126,6քմ հողատարածքը և 1315,35քմ ընդհանուր մակերեսով շենք-շինությունները: Կնքված պայմանագրի շրջանակում «Տ-Քնսթրաքշն» փակ բաժնետիրական ընկերությունը վարձակալած հողամասի վրա կառուցել է շինություն (այսուհետ՝ Շինություն), որը կողմերի միջև պայմանագրով ձեռք բերված համաձայնության ուժով համարվում է վերջինիս սեփականությունը: Մինչդեռ, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 202-րդ և Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 5-րդ հոդվածների ուժով՝ Շինության նկատմամբ «Տ-Քնսթրաքշն» փակ բաժնետիրական ընկերության սեփականության իրավունքի գրանցման համար նախապայման է հողամասի համապատասխան մասի նկատմամբ վերջինիս սեփականության իրավունքի գրանցումը: Կողմերի միջև ձեռք է բերվել համաձայնություն՝ «Տ-Քնսթրաքշն» փակ բաժնետիրական ընկերության կողմից կառուցված շինությամբ

ծանրաբեռնված հողամասի նկատմամբ սեփականության իրավունքի 83 տոկոս բաժնեմասը օտարել վերջինիս: Նշված բաժնեմասի օտարման արդյունքում Ընկերությունը կհանդիսանա հողամասի նկատմամբ 17 տոկոս բաժնեմասի սեփականատեր: Շինության նկատմամբ իրավունքի պետական գրանցման արդյունքում Ընկերությունը ձեռք կբերի Շինության համապատասխան բաժնեմասի նկատմամբ սեփականության իրավունք: Շինության նկատմամբ «Տ-Քնսթրաքշն» փակ բաժնետիրական ընկերության և Ընկերության իրավունքները կգրանցվեն հողամասի սեփականության իրավունքում նրանց ունեցած բաժիններին համապատասխանող համամասնությամբ: Ինչպես հետևում է գրությունից՝ հողամասի և Շինության ընդհանուր արժեքը, որպես մեկ ամբողջություն, հավասար է հողամասի շուկայական արժեքի և Շինության նախահաշվային արժեքի հանրագումարին, և հողամասի նկատմամբ կողմերի բաժինները կորոշվեն այն համամասնությամբ, որը համապատասխանում է հողամասի շուկայական արժեքի ու Շինության նախահաշվային արժեքի հանրագումարում այդ արժեքների հանրագումարին: «Տ-Քնսթրաքշն» փակ բաժնետիրական ընկերության կողմից Ընկերությանը վճարման ենթակա գումարը կկազմի 32,831,480 դրամ, նույնքան կկազմի Ընկերության կողմից «Տ-Քնսթրաքշն» փակ բաժնետիրական ընկերությանը վճարվելիք գումարը, այսինքն, տեղի կունենա առաջացած վճարման պարտավորությունների հաշվանց, և կողմերից որևէ մեկը մյուսի նկատմամբ չի ունենա գումար վճարելու պարտավորություն: Նշվածից ելնելով՝ Ընկերությունը խնդրել է համաձայնություն տալ իրեն սեփականության իրավունքով պատկանող՝ Երևան քաղաքի Բագրատունյաց 54/1 հասցեում գտնվող հողատարածքից 0,231766 հա մակերեսով հողամասի նկատմամբ գրանցված իրավունքի՝ 83/100 հարաբերակցությամբ բաժնեմասի նկատմամբ իրավունքը «Տ-Քնսթրաքշն» փակ բաժնետիրական ընկերությանն օտարելու գործարքի (այսուհետ՝ Գործարք) կնքմանը,

բ) Հանձնաժողովը, ղեկավարվելով «Էներգետիկայի մասին» օրենքի 27-րդ հոդվածի 3-րդ կետով, 2020 թվականի հոկտեմբերի 1-ի №ԳԲ/34.1-Մ2-2/4170-2020 գրությամբ դիմել է Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմ՝ ստանալու Գործարքի վերաբերյալ կառավարության դիրքորոշումը,

գ) Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմի ղեկավարի 2020 թվականի դեկտեմբերի 23-ի №02/12.8/53543-2020 գրությամբ Հանձնաժողով են ներկայացվել Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և

ենթակառուցվածքների ու էկոնոմիկայի նախարարությունների, Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ծառայության, Հայաստանի Հանրապետության անվտանգության խորհրդի քարտուղարի դիրքորոշումները՝ Գործարքի մասով առարկություններ չունենալու վերաբերյալ,

դ) Հանձնաժողովի կողմից գործարքին համաձայնություն տալը, «Էներգետիկայի մասին» օրենքի 27-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն, չի խախտում էներգետիկ համակարգի հուսալիությունը, անվտանգությունը և ներքին շուկայի սպառողների շահերը, չի սպառնում ազգային անվտանգությանն ու պետական շահերին, իսկ անհրաժեշտ փորձ ունեցող անձի վերաբերյալ դրույթը Գործարքի նկատմամբ կիրառելի չէ, և,

հիմք ընդունելով «Էներգետիկայի մասին» օրենքի 27-րդ հոդվածը և Հանձնաժողովի 2019 թվականի փետրվարի 27-ի №39Ն որոշմամբ հաստատված կարգը՝ Հանձնաժողովը **որոշում է.**

1. Համաձայնություն տալ Ընկերությանը պատկանող Երևան քաղաքի Բագրատունյաց 54/1 հասցեում գտնվող հողատարածքից 0,231766 հա մակերեսով հողամասի նկատմամբ գրանցված իրավունքի՝ 83/100 հարաբերակցությամբ բաժնեմասի նկատմամբ իրավունքը «Տ-Քնսթրաքշն» փակ բաժնետիրական ընկերությանն օտարելու գործարքին, պայմանով, որ Գործարքի կնքումից և դրանից բխող իրավունքների, ինչպես նաև Շինության նկատմամբ իրավունքների պետական գրանցումից հետո Ընկերությունը ձեռք կբերի սույն կետում նշված հողամասի վրա «Տ-Քնսթրաքշն» փակ բաժնետիրական ընկերության կողմից կառուցված շինության նկատմամբ հողամասում իր ունեցած բաժնեմասի համամասնությամբ սեփականության իրավունք՝ հողամասի օտարվող բաժնեմասի արժեքին համապատասխան գումարի դիմաց՝ առանց լրացուցիչ գումարային պարտավորությունների:

2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված գործարքի կնքման ժամկետը չի կարող գերազանցել սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից վեց ամիսը:

3. Ընկերությանը՝

1) սույն որոշման 1-ին կետով նախատեսված գործարքները կնքելուց հետո երկշաբաթյա ժամկետում Հանձնաժողով ներկայացնել դրա վերաբերյալ բոլոր փաստաթղթերի պատճենները.

2) ընդունել ի գիտություն, որ Ընկերությունն իրավասու է սույն որոշումը բողոքարկել Հանձնաժողով կամ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ այն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Ընկերությանն օրենքով սահմանված կարգով իրազեկելուն հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ **Գ. ԲԱՂՐԱՄՅԱՆ**

ք. Երևան
--- դեկտեմբերի 2020թ.